


31 մարտի, 2016թ.

AMERIABANK

# Շնորհանդես ներդրողների համար

Available on the iPhone App Store

EUROMONEY Awards for excellence 2014
2011, 2012, 2014

Best Bank Award • 2013 Global Finance
2012, 2013, 2014, 2015

The Banker Bank of the Year 2015 Armenia
2010, 2013, 2015

# Պատասխանատվության սահմանափակում

Սույն շնորհանդեսում պարունակվող տեղեկությունները չեն անցել անկախ ստուգում, և դրանց, ինչպես նաև սույն շնորհանդեսում արտահայտված կարծիքների ճշգրտության, ամբողջականության և անկողմնակալության վերաբերյալ չկա որևէ հավաստում: Ամերիաբանկը և դրա խորհրդատուները, ներկայացուցիչները, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձինք որևէ պատասխանատվություն (անփութության կամ այլ հիմքով) չեն կրում սույն փաստաթղթի կամ դրանում պարունակվող տեղեկությունների օգտագործման հետևանքով որևէ անձի հասցված վնասի համար: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում առաջարկ, և ոչ այն, որ դրա որևէ մաս չի կարող հիմք համարվել որևէ պայմանագիր, համաձայնագիր կամ գործարք կնքելու համար:

Սույն շնորհանդեսը պարունակում է այսպես կոչված «հեռանկարային» պնդումներ, որոնք փաստ չեն հանդիսանում, այլ արտահայտում են մեր սպասումներն ու ակնկալիքները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները: Նշված հեռանկարային պնդումները հիմնվում են Ամերիաբանկի ղեկավարությանը հասանելի ընթացիկ ծրագրերի, գնահատականների և կանխատեսումների վրա, և հետևաբար արդիական են միայն դրանց հրապարակման պահին: Մենք չենք պարտավորվում վերանայել դրանք քաղաքականության փոփոխության կամ նոր իրադարձությունների/փաստերի ի հայտ գալու դեպքում: Իրենց բնույթից ելնելով՝ հեռանկարային դրույթները պարունակում են ռիսկեր և անորոշություններ, որոնց պատճառով ակնկալվող արդյունքները կարող են էապես տարբերվել փաստացի արդյունքներից:




Սույն փաստաթուղթը կարող է տրամադրվել ըստ պահանջի կամ բեռնվել www.ameriabank.am կայքից:

## «Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

AMERIAGROUP

AMERIA

## ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ՀԱՐԿԱՅԻՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Առաջատարը Հայաստանի մասնագիտական խորհրդատվական ծառայությունների շուկայում (1998 թ-ից)

AMERIABANK

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ, ՄԱՆՐԱԾԱԽ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ունիվերսալ բանկ, որը մատուցում է կորպորատիվ, մանրածախ և ներդրումային բանկային ծառայություններ (հիմնադրվել է 1910թ. որպես Կովկասյան առևտրային բանկի մասնաճյուղ)

PRODECO
PROPERTY DEVELOPMENT COMPANY

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Անշարժ գույքի զարգացման և կառավարման ծառայություններ մատուցող ընկերություն (2010թ-ից)

## ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

### ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝

1. Մեր հաճախորդներին տրամադրելով **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻ** ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ
2. Իրականացնելով հասարակության **ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆՆ** ուղղված նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր
3. Ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման մոդել միավորելով **ՀԱՋՈՂԱԿ ՄԱՐԴԿԱՆՑ**
4. Շարունակաբար **ԱՎԵԼԱՑՆԵԼՈՎ** մեր **ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

## ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. Հաճախորդակենտրոն մոտեցում և սպասարկման բարձր որակ
2. Հաճախորդների վստահություն և բավարարվածություն
3. Գործարար էթիկայի սկզբունքներ և տեղեկատվական թափանցիկություն
4. Բարձր պրոֆեսիոնալիզմ և թիմային աշխատանքի սկզբունքներ

# Մեր գործընկերները և տնօրենները

## Երբ անուններն ամեն ինչ ասում են ...



**ԱՆԴՐԵՅ ՄԿՐՏՉՅԱՆ**

Տնօրենների խորհրդի նախագահ («Ամերիա» ընկերությունների խմբի գործադիր տնօրեն)

Ունի ներդրումային և կառավարման ոլորտներում խորհրդատվության 20 տարվա փորձ, Հայաստանում ներդրումաբանկային ոլորտի հիմնադիրներից է, մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհրդի անդամ:



**ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Տնօրենների խորհրդի անդամ («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDEA) հիմնադրամի խորհրդի նախագահ)

Հայտնի ներդրումային բանկիր՝ ավելի քան 22 տարվա աշխատանքային փորձով, առանցքային դեր է խաղացել Ռուսաստանի կապիտալի շուկաների կայացման գործում, Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի հիմնադիր գործընկեր է, Ռուսաստանի և այլ երկրների մի շարք կազմակերպությունների խորհրդի անդամ, ՄՖԿ-ի (ՀԲ՝ մասնավոր հատվածը սպասարկող ճյուղի) Տնտեսական խորհրդատվական խորհրդի անդամ:



**ՆՈՒԲԱՐ ԱՖԵՅԱՆ**

Գիտությունների դոկտոր (PhD), Տնօրենների խորհրդի անդամ (գլխավոր գործընկեր/գործադիր տնօրեն, Ֆլեգշիփ Վենչըրզ)

Ունի վենչուրային կապիտալի կառավարման (մասնակցել է կենսաբանական/բարձր տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող 24 ընկերությունների հիմնադրմանը) և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում դասավանդման ավելի քան 26 տարվա փորձ, մի շարք պետական և մասնավոր կազմակերպությունների խորհրդի կազմում է:



**ՌՈԲԵՐՏ ՖՈՆ ՌԵԿՈՎՍԿԻ**

Տնօրենների խորհրդի անկախ անդամ (փոխնախագահ, զարգացող շուկաների ռազմավարության բաժին, Ֆիդելիթի Ինվեսթմընթս)

Ունի աշխարհով մեկ ակտիվների և պորտֆելների կառավարման 27 տարվա փորձ, հանդիսանում է մի շարք պետական և մասնավոր կազմակերպություննե րի խորհրդի անդամ:



**ԳՈՌ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

Տնօրենների խորհրդի անդամ (ռեկտորի խորհրդական, Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոց)

Ունի Ռուսաստանի խոշորագույն ներդրումային ընկերություններից մեկի կառավարման ավելի քան 21 տարվա փորձ, Մուլտիմեդիա Արտ թանգարանի դիտորդ խորհրդի անդամ է:

# Մեր գործընկերները և տնօրենները

## Երբ անուններն ամեն ինչ ասում են …



### ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն, Ամերիաբանկ

Փորձառու բանկիր՝ Հայաստանի առևտրային բանկերում ավելի քան 20 տարվա փորձով:



### ԳԵՎՈՐԳ ԹԱՌՈՒՄՅԱՆ

Գլխավոր ֆինանսական տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալ, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ավելի քան 19 տարվա փորձ ֆինանսական կառավարման ոլորտում, 13 տարվա փորձ ֆինանսական տնօրենի պաշտոնում ՀՀ առևտրային բանկերում:



### ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Իրավաբանական տնօրեն, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ունի իրավաբանական պրակտիկայի ավելի քան 15 տարվա փորձ, մասնագիտանում է կորպորատիվ, բանկային և քաղաքացիական իրավունքի ոլորտում, ինչպես նաև արժեթղթերի բնագավառում:



### ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Աուդիտի և ներքին վերահսկողության գծով տնօրեն, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ունի 21 տարվա փորձ հաշվապահական հաշվառման, աուդիտի և հարկային գործունեության ոլորտներում:



### ԳԱԳԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Տնօրեն կորպորատիվ բանկային գործառնությունների գծով, Ամերիաբանկ

Ավելի քան 6 տարվա փորձ կորպորատիվ բանկային գործառնությունների ոլորտում և կառավարման խորհրդատվության ավելի քան 15 տարվա փորձ մի շարք մասնավոր և միջազգային կազմակերպություններում:

# Մեր գործընկերները և տնօրենները

## Երբ անուններն ամեն ինչ ասում են …



**ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ**

Զարգացման գծով տնօրեն, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ունի ավելի քան 21 տարվա փորձ ուսումնասիրություններ ի և մշակումների ոլորտում մասնավոր և միջազգային կազմակերպություններ ում, գրքերի և ավելի քան 130 գիտական հոդվածների և այլ հրապարակումների հեղինակ է:



**ԱՐՄԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Տնօրեն մանրածախ բանկային գործառնությունների գծով, Ամերիաբանկ

Ավելի քան 16 տարվա փորձ մանրածախ գործունեության և կառավարման ոլորտում ՀՀ առևտրային բանկերում



**ԱՌՆՈ ՄՈՍԻԿՅԱՆ**

Տնօրեն ներդրումաբանկային գործառնությունների գծով, Ամերիաբանկ

Ավելի քան 12 տարվա աշխատանքային փորձ ներդրումաբանկային խորհրդատվության, պորտֆելների և ռիսկերի կառավարման ոլորտներում մեծ քառյակի ընկերություններում և ներդրումային բանկերում



**ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ**

Տնօրեն առևտրային գործառնությունների գծով, Ամերիաբանկ

Առևտրային գործառնությունների ավելի քան 16 տարվա փորձ Հայաստանի առևտրային բանկերում



**ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Տնօրեն տեխնոլոգիաների և գործառնությունների գծով, «Ամերիա» ընկերությունների խումբ

Ավելի քան 19 տարվա փորձ հեռահաղորդակցման ոլորտում ղեկավար պաշտոններում, ավելի քան 10 տարվա փորձ վաճառքի և հաճախորդների հետ հարաբերությունների ոլորտում ղեկավար պաշտոններում



**ՍԱՄՎԵԼ ԱՂԱԲԱԲՅԱՆ**

Անվտանգության ծառայության ղեկավար, «Ամերիա» ընկերությունների խումբ

17 տարի պետական և առևտրային կազմակերպություններ ի անվտանգության համակարգում

# Մեր թիմը՝ ով ենք մենք

## Ավելի քան 600՝ իրենց գործին նվիրված մասնագետներ



## ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԴԻՐՔԸ

### ՀՀ բանկային համակարգի առաջատարն ըստ 2016թ. 1-ին եռ. արդյունքների




1- նն ըստ ակտիվների

1-նն ըստ պարտավորությունների

1-նն ըստ վարկային պորտֆելի

1-նն ըստ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների

1-նն ըստ սեփական կապիտալի

1-նն ըստ շահույթի

# Հիմնական ձեռքբերումները՝ համառոտ ակնարկ

- 40 մլն ԱՄՆ դոլարի ներդրում բանկի կապիտալում ՎԶԵԲ-ի կողմից
- 50 մլն ԱՄՆ դոլարի ներդրում քվազի կապիտալի տեսքով ՄՖԿ-ի կողմից
- Արդյունքում՝ բանկի գործունեության ծավալի կրկնապատկում
- Գործընկերության նոր մակարդակ՝ առաջնային հրապարակային տեղաբաշխում իրականացնելու ճանապարհին











# Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի B+ վարկանիշ՝ <u>կայուն հեռանկարով</u>



# Հիմնական ուժեղ կողմերը

## Ապագան կառուցվում է այսօր

| ԱՌԱՋԱԴԵՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ | ՀՍԿԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԱՃՈՂ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ | ԱՐԺԵՍՏԱՎԱՐԺ ԱՆՁՆԱԿԱԶՄ |
|---|---|---|---|
| Աննախադեպ ներդրումներ SS-ում և տեխնոլոգիական նորամուծություններ | Մանրածախ, կորպորատիվ և ներդրումաբանկային ծառայությունների լայն ընտրանի | Ռիսկերի կառավարման բարձր որակ | Ղեկավարների արհեստավարժ թիմ, որոնցից շատերը կրթություն են ստացել առաջատար արևմտյան համալսարաններում |
| Հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման (CRM) ավտոմատացված համակարգ | Ֆինանսավորման լայն հնարավորություններ ընձեռող մեծ կապիտալ | ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային չափանիշներին համապատասխանության վկայական՝ տրված TÜV Rheinland գերմանական ընկերության կողմից | Անձնակազմի շարունակական վերապատրաստում և ուսուցում |
| BankWorld հեռակառավարման բազմաֆունկցիոնալ համակարգ | Կայուն համագործակցություն հետազոտական ընկերությունների և անկախ խորհրդատուների հետ | Կորպորատիվ կառավարման լավագույն փորձի կիրառում | Մեծ փորձ պետական և արտադրական ավելի քան 30 ոլորտներում |

# Մատուցվող ծառայությունները

## Հատուկ Ձեզ համար մշակված անհատական բանկային և խորհրդատվական ծառայություններ

| ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|
| Վարկավորում | Սպառողական վարկավորում | Միաձուլումներ և ձեռքբերումներ | Իրավաբանական ծառայություններ |
| Առևտրի ֆինանսավորում | Հիփոթեքային վարկավորում | Կորպորատիվ ֆինանսներ | Գործարար խորհրդատվություն |
| Ֆինանսական վարձակալություն | Ավտովարկեր | Կապիտալի շուկաներ | Ֆինանսական խորհրդատվություն |
| Ֆակտորինգ | Վարկային քարտեր (Visa, MC, ArCa) | Ուղղակի ներդրումներ | Աուդիտ և որակի երաշխավորում |
| Նախագծերի ֆինանսավորում | Ավանդներ | Ակտիվների կառավարում | Հաշվապահական և հարկային հաշվառում |
| Աշխատավարձային նախագծեր | Մետաղական հաշիվներ | Բրոքերային գործառնություններ | Խորհրդատվություն մարդկային ռեսուրսների գծով |
| Ավանդներ | Ներդրումային վարկեր | Ներդրումային խորհրդատվություն | Նախագծերի կառավարում |

# «Ամերիա» ընկերությունների խմբի ներկայացուցչությունն ԱՄՆ-ում

## Մենք ձգտում ենք դառնալ հայկական արմատներով առաջին միջազգային ֆինանսական խումբը:

- ՀՀ առաջատար ֆինանսախորհրդատվական խմբի աննախադեպ ներկայություն ԱՄՆ-ում

- «Ամերիա» ընկերությունների խմբի պրոդուկտների և ծառայությունների առաջխաղացումն ԱՄՆ-ի հայկական Սփյուռքում

- Տեղակայված լինելով Գլենդելի (Քալիֆորնիա) գործարար կենտրոնում՝ Բրենդ Բուլվարում՝ «Ամերիա Գրուփ Ինք»-ը համալրված է մասնագետների պրոֆեսիոնալ թիմով, ովքեր միշտ պատրաստ են տրամադրել բարձրակարգ ներդրումային, կառավարչական, իրավաբանական և ցանկացած այլ տեսակի խորհրդատվություն:

- Մի շարք ներդրումային և խորհրդատվական նախագծերի բարեհաջող իրականացում

- 2011թ. սեպտեմբերին կայացած բացման պաշտոնական արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Լոս Անջելեսի քաղաքապետը և այլ պատվավոր հյուրեր Լոս Անջելեսից և Հայաստանից:








# Պարգևներ և մրցանակներ

## Շարունակական ճանաչում և գնահատանք ամենահեղինակավոր միջազգային հաստատություններից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2013 ԵՎ 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2 ՏԱՐԻ ԱՆԸՆԴՄԵՋ՝ 2014, 2012 ԵՎ 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2015, 2014, 2013 ԵՎ 2012
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ 2013 ԵՎ 2012
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 2013 ԵՎ 2012

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ 2013, 2012 ԵՎ 2010ԹԹ. ԳԵՐԱԶԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑԱՆԱԿ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆԹԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՎԶԵԲ՝ «ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐՔ 2013» ՄՐՑԱՆԱԿ, ՄՖԿ՝ GTFP ՄՐՑԱՆԱԿ 2014, 2012 ԵՎ 2010՝ ԱՄԵՆԱԱԿՏԻՎ ԹՈՂԱՐԿՈՂ ԲԱՆԿ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԿԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (GTFP) ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹՈՂԱՐԿՈՂ ԲԱՆԿ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 2012

# Համագործակցություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ

Համագործակցություն ամենահեղինակավոր ֆինանսական հաստատությունների հետ՝ շուրջ 375 մլն* ԱՄՆ դոլարի ծրագրերի շրջանակներում

- Առևտրի ֆինանսավորում
- Էներգաարդյունավետություն
- ՓՄՁ
- Գյուղատնտեսություն

*Այդ թվում՝ Առևտրի աջակցման ծրագիրը

# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Մեր գործունեության հիմքում են ազնվությունը, փոխվստահությունը և էթիկայի սկզբունքները: Դրանք են մեր ուղենիշը մեր բոլոր հաճախորդների, աշխատակիցների, բաժնետերերի և գործընկերների հետ փոխհարաբերություններում:



## Երեխաների առողջություն

5-րդ ամանորյա բարեգործական աճուրդը, որի ողջ հասույթն ուղղվում է ծանր հիվանդություններով տառապող երեխաների բուժմանը:
«Ռոբոտների շքերթ» ինտերակտիվ ցուցահանդեսի կազմակերպում և հովանավորում: Ցուցահանդեսում ներկայացված էին ժամանակակից ռոբոտաշինության լավագույն նմուշներն աշխարհի տարբեր երկրներից:






## Առողջ ապրելակերպ և շրջակա միջավայր

Առողջ ապրելակերպի խրախուսում «Ամերիա» թենիսի գավաթ, հեծանվարշավներ (ինչպես նաև հեծանիվների կայանատեղերի ստեղծում), կանաչապատման նախաձեռնություններ





## Արվեստ և մշակույթ

Հայաստանի պատմամշակութային ժառանգության պահպանում, աշխարհահռչակ երգիչների համերգների հովանավորում՝ Ջո Քոքեր, Ջորջ Բենսոն, Ալ Ջերո, Նինո Կատամաձե, Ջեթրո Թուլ և այլոք:




## Կրթություն

Կրթաթոշակներ լավ առաջադիմություն ցուցաբերող օժտված երեխաներին՝ Դիլիջանի միջազգային դպրոցում սովորելու համար







## Համահայկական հիմնադրամ

2010թ-ից սկսած՝ աջակցություն Արցախում զանազան կարևոր ծրագրերի իրականացմանը:

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

**Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ**

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Հայաստան՝ թվեր և ցուցանիշներ

Տնտեսական ազատության ինդեքս 2016

54-րդը 178-ից (չափավոր ազատ)

Ձեռնարկատիրության ուղեցույցի դյուրինությունը (Doing Business 2016)

35-րդը 189-ից

Մարդկային զարգացման ինդեքս 2015

85-րդը 188-ից

Ազգային արժույթը՝ հայկական դրամ (AMD)

Բնակչությունը՝ 2,999 հազ. (2015)

ՀՆԱ՝ 10,5 մլրդ (2015, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 3,504 (2015, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)



Մուդիզի վարկանիշ (մարտ 2016)

B1 (կայուն)

Ֆիտչի վարկանիշ (հունվար 2016)

B+ (կայուն)

Մրցունակության ինդեքս 2015-2016

82-րդը 140-ից

# Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ




























*Փոխանցումները ներառում են ֆիզիկական անձանց՝ բանկերի միջոցով կատարվող ընդհանուր առևտրային և մասնավոր փոխանցումները:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- 2016թ. 1-ին եռամսյակում ՀՀ տնտեսությունը դրսևորեց աճի ավելի բարձր տեմպեր, քան նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածում. տնտեսական ակտիվության ինդեքսը կազմեց 5.5%:
- Աճը հիմնականում ապահովվել է լեռնահանքային արդյունաբերության և սպասարկման ոլորտների հաշվին:
- ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմեց 2.4%, միաժամանակ, գրանցվեց որոշակի սղաճ (դեֆլյացիա):
- ՀՀ ԿԲ արտարժութային պահուստներն ավելացան **9%**-ով:
- Առևտրային հաշվեկշիռն ու ընթացիկ վճարային հաշվեկշիռն զգալիորեն բարելավվեցին շնորհիվ դրամական արտահայտմամբ ներկրման ծավալի նվազման:
- Համաշխարհային բանկը, Միջազգային արժութային հիմնադրամը, ՎԶԵԲ-ը և «Ֆիտչ» գործակալությունը 2016թ. կանխատեսում են ՀՆԱ-ի **1.9-2.2%** աճ:

Աղբյուրներ՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ ԿԲ

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

**ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները**

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները































## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը գրանցվել է ակտիվների, ավանդների և վարկերի չափավոր աճ, որը պայմանավորված է տնտեսության վերականգնմամբ և հաճախորդների վստահությամբ բանկային համակարգի հանդեպ:

- Չնայած նախորդ տարին բավականին դժվար էր, 2016թ. 1-ին եռամսյակում բանկային համակարգն արձանագրեց շահույթի երկնիշ աճ, այսինքն՝ ճգնաժամի ամենածանր շրջանն ամենայն հավանականությամբ հաղթահարված է:

- Բանկն զբաղեցնում է 5-րդ տեղն ըստ կապիտալի եկամտաբերության (2-րդը հիմնական մրցակիցների շարքում) գերազանցելով ինչպես միջին շուկայական (2.2%), այնպես էլ եկամտաբեր բանկերի ցուցանիշները (6.2%):

  2015թ. և 2016թ. 1-ին եռամսյակում 8 բանկ ներգրավվեց ավելի քան 67 մլրդ ՀՀ դրամի կապիտալ, ինչի հետևանքով կապիտալի միջին եկամտաբերությունը ժամանակավորապես նվազել է:

- Բանկի չախշատող վարկերը (1+ օր ժամկետանց) նվազել են 1.8%-ով՝ կազմելով **5.35%**, մինչդեռ միջին շուկայական ցուցանիշը մի փոքր ավելացել է՝ կազմելով **11%:**

  Բանկի ծախսերի և եկամտի հարաբերակցությունը մնում է միջին շուկայական ցուցանիշից բավականին ցածր:

# Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

ԱԿՏԻՎՆԵՐ — մլն ՀՀ դրամ

| #1Q2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|
| **1** | **1** | **Ամերիաբանկ** | **507,724** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 461,151 |
| 3 | 3 | ՎՏԲ Բանկ Հայաստան | 314,771 |
| 4 | 4 | Հայբիզնեսբանկ | 297,399 |
| 5 | 6 | ԱԿԲԱ | 279,239 |




ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ — մլն ՀՀ դրամ

| #1Q2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|
| **1** | **1** | **Ամերիաբանկ** | **320,444** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 302,355 |
| 3 | 3 | Հայբիզնեսբանկ | 210,046 |
| 4 | 5 | ԱԿԲԱ | 179,973 |
| 5 | 4 | ՎՏԲ Բանկ Հայաստան | 176,915 |




ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ — մլն ՀՀ դրամ

| #1Q2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|
| **1** | **1** | **Ամերիաբանկ** | **447,085** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 411,278 |
| 3 | 4 | ՎՏԲ Բանկ Հայաստան | 272,743 |
| 4 | 3 | Հայբիզնեսբանկ | 268,085 |
| 5 | 6 | ԱԿԲԱ | 221,742 |




ՊԱՐՏ. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ — մլն ՀՀ դրամ

| #1Q2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|
| **1** | **1** | **Ամերիաբանկ** | **288,821** |
| 2 | 2 | Արդշինբանկ | 259,832 |
| 3 | 3 | Հայբիզնեսբանկ | 195,383 |
| 4 | 4 | ՎՏԲ Բանկ Հայաստան | 183,332 |
| 5 | 5 | HSBC | 148,319 |




ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ — մլն ՀՀ դրամ

| #1Q2016 | #2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|
| **1** | **1** | **Ամերիաբանկ** | **60,639** |
| 2 | 2 | ԱԿԲԱ | 57,498 |
| 3 | 3 | HSBC | 53,962 |
| 4 | 4 | Արդշինբանկ | 49,872 |
| 5 | 6 | Ինեկոբանկ | 42,102 |




ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ — մլն ՀՀ դրամ

| #1Q2016 | #1Q2015 | ԲԱՆԿ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|
| **1** | **2** | **Ամերիաբանկ** | **1,196** |
| 2 | 3 | Ինեկոբանկ | 1,172 |
| 3 | 5 | Արդշինբանկ | 1,126 |
| 4 | 4 | ԱԿԲԱ | 1,118 |
| 5 | 1 | HSBC | 750 |




*Մասնաբաժինը եկամտաբեր բանկերի շահույթում
**Մասնաբաժինն ընդհանուր շահույթում (ներառյալ վնասը) կազմում է 26%:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Կայուն աճ վերջին 5 տարիների ընթացքում: Ակտիվների միջին տարեկան աճը վերջին 5 տարիների ընթացքում կազմել է **25.7%**, որի շնորհիվ բանկի շուկայական մասնաբաժինը **9.8%**-ից ավելացել է մինչև **15%**:
- Ակտիվների աճին զուգահեռ ավելացան նաև վարկային պորտֆելը և հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, որոնց միջին տարեկան աճը վերջին 5 տարում կազմեց համապատասխանաբար 27.5% և 32%:
- Բանկն առաջատարն է բոլոր հիմնական ցուցանիշներով:

**1-ին տեղն ըստ**

ակտիվների
վարկերի
ավանդների
սեփական կապիտալի
զուտ շահույթի

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

**Հաշվեկշիռ**

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Ակտիվներ, պարտավորություններ և կապիտալ

## Ակտիվներ




## Ակտիվների կառուցվածքը




## Պարտավորություններ և կապիտալ




## Պարտավորությունների կառուցվածքը




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Խոշորագույն բանկը ՀՀ-ում ըստ ակտիվների, որոնք գերազանցում են **1 մլրդ ԱՄՆ դոլարը:**
- Խոշորագույն բանկն ըստ սեփական և նորմատիվային կապիտալի: Մեկն այն 6 բանկերից, որոնց կապիտալն արդեն իսկ գերազանցում է ՀՀ ԿԲ նորմատիվը (**30 մլրդ ՀՀ դրամ, ուժի մեջ է 2017թ-ից**):
- Ակտիվների միջին տարեկան աճը վերջին 5 տարիների ընթացքում կազմել է **25.7%:**
- Հաշվեկշռի բազմազան կառուցվածք՝ **73%**-ից ավել տոկոսաբեր ակտիվներ և **66%** հաճախորդների միջոցներ:
- Ակտիվների և պարտավորությունների աննշան նվազումը սեզոնային բնույթ է կրում:

**508**
մլրդ ՀՀ դրամի
ակտիվներ

**447**
մլրդ ՀՀ դրամի
պարտավորություններ

# Վարկային պորտֆել

## Վարկային պորտֆել




## Վարկային պորտֆելի կենտրոնացումը




*ՀՀ ԿԲ Ն3.1՝ մեկ փոխառուի ռիսկը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի **20%-ը**:
*ՀՀ ԿԲ Ն3.2՝ խոշոր փոխառուների ռիսկը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի **500%-ը**: Խոշոր է համարվում այն փոխառուն, որի վարկային պարտավորությունների հանրագումարը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5%-ը:

## Վարկային պորտֆելի կառուցվածքը




## Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ամենախոշոր վարկային պորտֆելը ՀՀ բանկային համակարգում՝ վերջին 5 տարիների ընթացքում միջին տարեկան աճը կազմել է **27.5%**:
- Վարկային պորտֆելի աճը գերազանցում է միջին շուկայական մակարդակը:
- Ֆիզիկական անձանց և ՓՄՁ-ներին տրամադրված վարկերի հարաբերակցությունն ընդհանուր վարկերին կազմում է **30%**:
- Վարկային պորտֆելի աննախադեպ բազմազանեցում՝ ներառելով տնտեսության տարբեր հատվածներ
- 2015թ. վերջում ներգրավված նոր կապիտալի շնորհիվ հաջողվեց զգալիորեն բարելավել ՀՀ ԿԲ՝ վարկային պորտֆելի կենտրոնացման նորմատիվները:

**318**

**մլրդ ՀՀ դրամի**
վարկեր

# Կորպորատիվ վարկեր և առևտրի ֆինանսավորում

## Կորպորատիվ վարկեր




## Կորպորատիվ վարկերի կառուցվածքն ըստ արժույթի




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- 2016թ. 1-ին եռամսյակում կորպորատիվ վարկերը 2015թ. տարեվերջի համեմատ աճել են: Ընդ որում ՓՄՁ պորտֆելի աճն ավելի արագ է, քան խոշոր վարկերինը, ինչը համահունչ է բանկի ռազմավարությանը:
- Նախորդ տարվա անկումից հետո առևտրի ֆինանսավորման տեմպերը վերականգնվում են: Բանկն այժմ ունի առևտրի ֆինանսավորման ամենաներկայացուցչական պորտֆելներից մեկը:

## Առևտրի ֆինանսավորում




## Առևտրի ֆինանսավորման կառուցվածքն ըստ արժույթի




**269**

**մլրդ ՀՀ դրամի**

կորպորատիվ վարկեր

**20**

**մլրդ ՀՀ դրամի**

առևտրի ֆինանսավորում

# Մանրածախ վարկեր

## Մանրածախ վարկեր




## Մանրածախ վարկերի կառուցվածքն ըստ արժույթի




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Նախորդ տարվա պահպանողական մոտեցումից հետո բանկն այժմ վերանայել է իր քաղաքականությունը և 2016թ. 1-ին եռամսյակի ավարտին սկսել նոր վարկային արշավ: Ապրիլ ամսին արդեն գրանցվել է մանրածախ վարկային պորտֆելի որոշակի աճ:
- Բանկը հաստատապես մտադիր է հետագայում ավելացնել իր մանրածախ վարկային պորտֆելը:

## Մանրածախ բիզնես վարկեր




## Սպառողական վարկեր




**49**
մլրդ ՀՀ դրամի
մանրածախ վարկեր

**9.9**
մլրդ ՀՀ դրամի
ՓՄՁ վարկեր

# Վարկային պորտֆելի որակը

## Չաշխատող վարկեր (90+ օր ժամկետանց)




## Ծածկույթի գործակից (90+ օր ժամկետանց)




## Վարկային ռիսկի արժեքը




*Վարկային ռիսկի եռամսյակային արժեքը ներկայացված է տարեկան կտրվածքով:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ըստ ամենայնի, վարկային ճգնաժամի ամենածանր շրջանը հաղթահարված է. բանկի չաշխատող վարկերը (90+ օր ժամկետանց) սկսել են նվազել: Սա դրականորեն է անդրադարձել նաև վարկային ռիսկի արժեքի վրա, որը գրեթե կրկնակի կրճատվել է:
- Բոլոր խոշոր չաշխատող վարկերն ապահովված են հիմնական միջոցների գրավով՝ մինչև **80%** վարկ/գրավ հարաբերակցությամբ:
- 2016թ. մենք ակնկալում ենք չաշխատող վարկերի մակարդակի բարելավում:
- Բանկը կիրառում է պահուստավորման լուրջ քաղաքականություն, որի շնորհիվ կարողանում է շարունակաբար բարելավել մասհանումների ծածկույթը:

**4.2%**

չաշխատող վարկեր (90+ օր ժամկետանց)

**1.02%**

վարկային ռիսկի արժեքը

# Հաճախորդների ավանդներ

## Ավանդային պորտֆել




## Ավանդների կառուցվածքն ըստ արժույթի




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ավանդային բազայի նվազումը պայմանավորված է ցպահանջ ավանդների սեզոնային նվազմամբ:
- Չնայած տոկոսադրույքների նվազմանը, 2016թ. 1-ին եռամսյակում ժամկետային ավանդների ծավալը կայուն էր, ինչը վկայում է Ամերիաբանկի հանդեպ հաճախորդների շարունակական վստահության մասին:

**289**

մլրդ ՀՀ դրամի
ավանդներ

**145**

մլրդ ՀՀ դրամի
կորպորատիվ ավանդներ

**144**

մլրդ ՀՀ դրամի
մանրածախ ավանդներ

## Կորպորատիվ ավանդային պորտֆել




## Մանրածախ ավանդային պորտֆել



# Միջազգային ֆինանսական հաստատությունների և կառավարության կողմից տրված վարկեր, ստորադաս փոխառություններ և կապիտալ

## Ներգրավված միջոցներ




## Ստորադաս փոխառություններ




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Տարածաշրջանում միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցող ամենաակտիվ բանկը: Բանկի գործընկերների ցանկը տարեցտարի ընդլայնվում է շնորհիվ ռիսկայնության ցածր մակարդակի, որը թույլ է տալիս բանկին պարտավորությունների մի մասը փոխակերպել էժան ու երկարաժամկետ ֆինանսավորման:
- **Խոշորագույն** բանկը Հայաստանում ըստ կապիտալի

## Կապիտալ




## Բաժնետիրական կապիտալ




**98** մլրդ ՀՀ դրամի ներգրավված միջոցներ

**40** մլրդ ՀՀ դրամի ստորադաս փոխառություն

**61** մլրդ ՀՀ դրամի սեփական կապիտալ

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

**Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն**

Գործակիցներ

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Տոկոսային եկամուտ

## Տոկոսային եկամուտ




## Տոկոսային եկամտի կառուցվածքը




## Տոկոսային ծախսերի կառուցվածքը




## Զուտ տոկոսային մարժա




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Զուտ տոկոսային եկամտի և մարժայի նվազումը ժամանակավոր է, քանի որ 2015թ. վերջում միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցները, այդ թվում՝ ՄՖԿ-ի ստորադաս փոխառությունը, դեռևս ամբողջովին չեն տեղաբաշխվել:

- Բացի դրանից, զուտ տոկոսային մարժայի վրա շարունակում է ազդել ՀՀ ԿԲ պահուստավորման նորմատիվի խստացումը (2014թ. գրեթե կրկնակի), որի հետևանքով մարժան կրճատվել է **0.6 տոկոսային կետով**: Ներկայում բանկի պարտադիր անտոկոս պահուստները ՀՀ ԿԲ-ում կազմում են **57 մլրդ ՀՀ դրամ** կամ ընդհանուր ակտիվների **11%**-ը: Նորմատիվի վերանայումից հետո հնարավոր կլինի օգտագործել այժմ որպես պահուստներ պահվող միջոցները զուտ տոկոսային մարժայի, զուտ շահույթի և կապիտալի շահութաբերության ավելացման նպատակով:

**3.4**

**մլրդ ՀՀ դրամի**

զուտ տոկոսային եկամուտ

# Ոչ տոկոսային եկամուտ

## Ոչ տոկոսային եկամուտ




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Ոչ տոկոսային եկամտի նվազումը սեզոնային բնույթ է կրում. մեր կարծիքով հետագա հաշվետու ժամանակահատվածներում բանկը կվերականգնի շեղումը և կապահովի տարեկան աճ:
- Ոչ տոկոսային եկամտի բազմազան կառուցվածք (**81%**-ը գոյանում է հիմնական գործունեությունից):

## Ոչ տոկոսային եկամտի կառուցվածքը




## Միջնորդավճարների և այլ նմանատիպ եկամտի կառուցվածքը




**0.9**

**մլրդ ՀՀ դրամի**

զուտ ոչ տոկոսային եկամուտ

# Գործառնական շահույթի կառուցվածքն ըստ ստորաբաժանումների

## Կորպորատիվ ստորաբաժանումների գործառնական շահույթի կառուցվածքը




## Մանրածախ ստորաբաժանումների գործառնական շահույթի կառուցվածքը




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Զուտ տոկոսային մարժայի կրճատումը (սլայդ 22) և մասհանումների քաղաքականության միտումնավոր խստացումը (բավարար պահուստներ ապահովելու նպատակով) հանգեցրել են կորպորատիվ և մանրածախ բլոկների տարեկան գործառնական շահույթի ժամանակավոր կրճատման: Ակնկալվում է, որ 2016թ. 2-րդ եռամսյակից վարկավորման ակտիվացումը մոտ ապագայում կնպաստի արդյունքների բարելավմանը:
- Զուտ տոկոսային եկամտի նվազումը տարեկան կտրվածքով մասամբ պայմանավորված է տրանսֆերտային գնի քաղաքականության վերանայմամբ, որի համաձայն այժմ կորպորատիվ և մանրածախ ստորաբաժանումները նույնպես կրում են ՀՀ ԿԲ պահուստավորման ծախսեր:

**2.0**

**մլրդ ՀՀ դրամի**
գործառնական շահույթ կորպորատիվ բանկային գործառնություններից

**0.9**

**մլրդ ՀՀ դրամի**
գործառնական շահույթ մանրածախ բանկային գործառնություններից

# Գործառնական շահույթի կառուցվածքն ըստ ստորաբաժանումների

## Առևտրային դեպարտամենտի գործառնական շահույթի կառուցվածքը




## Գործառնական շահույթի կառուցվածքն ըստ ստորաբաժանումների




*2016թ. 1-ին եռամսյակում ներդրումաբանկային գործունեությունից ստացված գործառնական շահույթը կազմեց 17 մլն ՀՀ դրամ (գծապատկերում ներառված չէ):

### ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- ՀՀ ԿԲ կարգավորման խստացմամբ պայմանավորված (2014թ. նորմատիվը գրեթե կրկնապատկվեց)՝ պահուստավորման ծախսերի զգալի մասը նախորդ տարի բաժին էր ընկնում Առևտրային գործառնությունների դեպարտամենտին: 2016թ. տրանսֆերտային գնի քաղաքականությունը վերայանվեց՝ այդ ծախսերը բոլոր ստորաբաժանումների միջև բաշխելու համար:

**0.6**

**մլրդ ՀՀ դրամի**

շահույթ առևտրային գործառնություններից

# Վարչական ծախսեր և զուտ եկամուտ

## Վարչական ծախսեր




## Վարչական ծախսերի կառուցվածքը




## Շահույթ և վնաս




## Զուտ շահույթ




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Վարչական ծախսերը **4%**-ով նվազել են շնորհիվ արտադրողականության բարձրացման և ծախսերի արդյունավետ կառավարման:
- Զուտ շահույթի ձևավորման վրա հիմնականում ազդում էր բանկի կողմից դիտավորյալ կատարվող պահուստավորման ավելացումը ամրության բավարար պաշար ստեղծելու նպատակով:
- Ըստ զուտ շահույթի բանկն զբաղեցնում է 1-ին տեղը ՀՀ բանկային համակարգում:

**1.2**

**մլրդ ՀՀ դրամի**

զուտ շահույթ

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

**Գործակիցներ**

Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ

# Գործակիցներ

## Ակտիվների եկամտաբերություն




## Կապիտալի եկամտաբերություն




## Ծախսերի հարաբերությունը եկամտին




## Կապիտալի համարժեքության գործակից




## Իրացվելիության ծածկույթ




## Զուտ կայուն ֆինանսավորման գործակից




## Վարկերի հարաբերությունը ավանդներին և փոխառություններին




## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Կապիտալի եկամտաբերությունը շարունակում է զգալիորեն գերազանցել միջին շուկայական ցուցանիշը (որը միայն եկամտաբեր բանկերի մասով կազմում է 6.2%), իսկ անկումը կանխատեսելի էր և կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ 2015թ. վերջում ՎԶԵԲ-ից ներգրավված կապիտալը դեռ պետք է ամբողջովին տեղաբաշխվի տոկոսաբեր ակտիվներում:
- Ծախսեր/եկամուտ հարաբերակցությունը մի փոքր ավելացել է, բայց այդուհանդերձ զգալիորեն ցածր է միջին շուկայական ցուցանիշից, որը կազմում է **52%**:
- Նոր կապիտալի և ստորադաս փոխառության ներգրավումը թույլ տվեց ապահովել իրացվելիության զգալի պաշար ու կապիտալի համարժեքության բարձր մակարդակ, որոնք իրենց հերթին թույլ կտան ընդլայնել վարկավորման հնարավորությունները:
- Իրացվելիության պահուստների ավելացումը ծախսատար է, սակայն ներկա տնտեսական պայմաններում այս մոտեցումը շատ ավելի ապահով է:

**0.9%**

ակտիվների եկամտաբերություն

**8.0%**

կապիտալի եկամտաբերություն

**44.8%**

ծախսերի հարաբերությունը եկամտին

*Հայտարարը ներառում է հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, միջազգային ֆինանսական հաստատություններից ստացված փոխառությունները, կառավարության տրամադրած փոխառությունները, ինչպես նաև ստորադաս փոխառությունները:

«Ամերիա» ընկերությունների խումբ՝ համառոտ ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Հաշվեկշիռ

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Գործակիցներ

**Հավելված 1. Ֆինանսական հաշվետվություններ և մրցակիցներ**

*հազ. ՀՀ դրամ*

| ՀՈԴՎԱԾ | 2016թ. 1-ին եռ. | 2015 |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 128,199,054 | 142,713,317 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ | 321,095 | 465,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 10,627,999 | 10,278,601 |
| Միջոցների կարճաժամկետ տեղաբաշխում դրամական շուկայում | 10,834,846 | 14,153,152 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 330,458,572 | 321,891,139 |
| Մինչև մարումը պահվող ներդրումներ | 19,762,177 | 19,570,705 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 3,420,508 | 3,195,703 |
| Այլ ակտիվներ | 4,100,072 | 3,605,768 |
| **Ընդամենն ակտիվներ** | **507,724,323** | **515,873,688** |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | 488,712 | 582,560 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 36,567,734 | 40,219,294 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 288,820,833 | 294,012,140 |
| Այլ փոխառու միջոցներ | 77,426,556 | 78,383,861 |
| Ստորադաս փոխառություններ | 39,659,306 | 39,721,324 |
| Այլ պարտավորություններ | 4,122,185 | 3,637,347 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **447,085,326** | **456,556,526** |
| Բաժնետիրական կապիտալ և էմիսիոն եկամուտ | 39,842,539 | 39,842,539 |
| Վերագնահատման պահուստ | (125,370) | (251,309) |
| Չբաշխված շահույթ | 20,921,828 | 19,725,932 |
| **Կապիտալ** | **60,638,997** | **59,317,162** |

# Շահույթ և վնաս. ՀՀ ԿԲ նորմատիվներ

*հազ. ՀՀ դրամ*

| ՀՈԴՎԱԾ | 2016թ. 1-ին եռ. | 1Q2015 |
|---|---|---|
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **3,406,146** | **3,761,370** |
| **Զուտ եկամուտ միջնորդավճարներից և այլ նմանատիպ եկամուտ** | **493,262** | **444,660** |
| Զուտ շահույթ/(վնաս) առևտրային գործառնություններից | 431,730 | 490,260 |
| Այլ գործառնական եկամուտ/(ծախս) | 4,581 | 411,372 |
| **Գործառնական եկամուտ** | **4,335,719** | **5,107,662** |
| Կորուստներ արժեզրկումից | (860,185) | (1,214,305) |
| Անձնակազմի ծախսեր | (1,152,830) | (1,294,252) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (789,036) | (732,308) |
| **Շահույթ/(վնաս) նախքան հարկումը** | **1,533,668** | **1,866,797** |
| Շահութահարկ | (337,772) | (396,069) |
| **Զուտ շահույթ/(վնաս)** | **1,195,896** | **1,470,728** |

| Անվանում | 2014 | 2015 | 2016թ. 1-ին եռ. | CBA requirement |
|---|---|---|---|---|
| Ն 1.2՝ Ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ | 13.1% | 15.1% | 18.7% | Նվազագույնը 12% |
| Ն 2.1՝ Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ (ընդհանուր իրացվելիություն) | 26.5% | 29.9% | 31.7% | Նվազագույնը 15% |
| Ն 2.2՝ Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ (ընթացիկ իրացվելիություն) | 94.3% | 151.3% | 163.3% | Նվազագույնը 60% |
| Ն 3.1՝ Մեկ փոխառուի առավելագույն ռիսկը | 15.6% | 17.5% | 13.7% | Առավելագույնը 20% |
| Ն 3.2՝ Խոշոր փոխառուների առավելագույն ռիսկը | 289.0% | 255.3% | 181.9% | Առավելագույնը 500% |
| Ն 4.1՝ Բանկի հետ կապված մեկ անձի առավելագույն ռիսկը | 0.5% | 1.0% | 3.4% | Առավելագույնը 5% |
| Ն 4.2՝ Բանկի հետ կապված բոլոր անձանց առավելագույն ռիսկը | 4.2% | 5.5% | 6.5% | Առավելագույնը 20% |

# Ակտիվներ

մլն ՀՀ դրամ

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | | 2015 | | | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | |
| **Ամերիաբանկ** | **1** | **14.5%** | **507,724** | **1** | **14.8%** | **515,874** | **-1.6%** |
| Արդշինբանկ | 2 | 13.1% | 461,151 | 2 | 11.5% | 401,767 | 14.8% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 3 | 9.0% | 314,771 | 3 | 9.0% | 315,846 | -0.3% |
| Հայբիզնեսբանկ | 4 | 8.5% | 297,399 | 4 | 8.8% | 306,689 | -3.0% |
| ԱԿԲԱ | 5 | 8.0% | 279,239 | 6 | 7.9% | 274,715 | 1.6% |
| HSBC | 6 | 7.3% | 256,648 | 5 | 7.9% | 275,406 | -6.8% |
| Ինեկոբանկ | 7 | 6.5% | 226,843 | 7 | 6.8% | 236,618 | -4.1% |
| Յունիբանկ | 8 | 4.8% | 169,658 | 9 | 4.5% | 158,512 | 7.0% |
| Կոնվերս Բանկ | 9 | 4.4% | 153,056 | 8 | 4.6% | 160,994 | -4.9% |
| Արարատբանկ | 10 | 3.7% | 130,674 | 10 | 3.8% | 132,640 | -1.5% |
| Հայէկոնոմբանկ | 11 | 3.1% | 108,180 | 11 | 3.1% | 108,792 | -0.6% |
| Առէքսիմբանկ | 12 | 2.9% | 102,812 | 12 | 2.9% | 99,698 | 3.1% |
| Արցախբանկ | 13 | 2.7% | 96,084 | 13 | 2.7% | 94,671 | 1.5% |
| Անելիք Բանկ | 14 | 2.6% | 90,518 | 14 | 2.6% | 91,865 | -1.5% |
| Պրոմեթեյ Բանկ | 15 | 2.4% | 83,144 | 16 | 2.2% | 78,209 | 6.3% |
| Արմսվիսբանկ | 16 | 2.3% | 81,768 | 15 | 2.4% | 85,487 | -4.4% |
| Զարգացման հայկական բան | 17 | 2.0% | 70,149 | 17 | 2.1% | 72,107 | -2.7% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 18 | 1.0% | 36,256 | 18 | 1.1% | 39,738 | -8.8% |
| Մելլաթ բանկ | 19 | 0.8% | 29,674 | 19 | 0.8% | 29,409 | 0.9% |
| ԲՏԱ Բանկ | 20 | 0.3% | 12,040 | 20 | 0.4% | 14,929 | -19.3% |
| Ընդամենը | | | 3,507,789 | | | 3,493,966 | 0.4% |

# Հաճախորդներին տրված վարկեր

մլն ՀՀ դրամ

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | | 2015 | | | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | |
| **Ամերիաբանկ** | **1** | **14.8%** | **320,444** | **1** | **14.7%** | **313,161** | **2.3%** |
| Արդշինբանկ | 2 | 14.0% | 302,355 | 2 | 12.9% | 274,924 | 10.0% |
| Հայբիզնեսբանկ | 3 | 9.7% | 210,046 | 3 | 9.7% | 206,042 | 1.9% |
| ԱԿԲԱ | 4 | 8.3% | 179,973 | 5 | 8.4% | 178,678 | 0.7% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 5 | 8.2% | 176,915 | 4 | 8.7% | 184,567 | -4.1% |
| HSBC | 6 | 7.7% | 165,409 | 6 | 8.0% | 169,592 | -2.5% |
| Ինեկոբանկ | 7 | 7.1% | 153,816 | 7 | 7.3% | 154,677 | -0.6% |
| Յունիբանկ | 8 | 5.3% | 114,601 | 8 | 5.2% | 110,216 | 4.0% |
| Կոնվերս Բանկ | 9 | 4.1% | 87,987 | 9 | 3.9% | 83,998 | 4.7% |
| Արարատբանկ | 10 | 3.1% | 66,738 | 10 | 3.1% | 66,082 | 1.0% |
| Արցախբանկ | 11 | 3.0% | 63,823 | 11 | 3.0% | 63,881 | -0.1% |
| Անելիք Բանկ | 12 | 2.8% | 60,208 | 12 | 2.9% | 61,739 | -2.5% |
| Հայէկոնոմբանկ | 13 | 2.6% | 57,223 | 13 | 2.8% | 59,220 | -3.4% |
| Առէքսիմբանկ | 14 | 2.6% | 55,544 | 14 | 2.8% | 58,967 | -5.8% |
| Զարգացման հայկական բան | 15 | 2.0% | 42,186 | 15 | 2.0% | 42,891 | -1.6% |
| Պրոմեթեյ Բանկ | 16 | 1.8% | 39,070 | 17 | 1.7% | 36,904 | 5.9% |
| Արմսվիսբանկ | 17 | 1.7% | 37,116 | 16 | 1.8% | 37,605 | -1.3% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 18 | 0.8% | 17,357 | 18 | 0.8% | 17,955 | -3.3% |
| Մելլաթ բանկ | 19 | 0.3% | 5,996 | 20 | 0.3% | 5,439 | 10.2% |
| ԲՏԱ Բանկ | 20 | 0.2% | 5,075 | 19 | 0.3% | 6,146 | -17.4% |
| Ընդամենը | | | 2,161,881 | | | 2,132,683 | 1.4% |

*Զուտ վարկեր (վարկեր, լիզինգ և ֆակտորինգ)

# Պարտավորություններ

մլն ՀՀ դրամ

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | | 2015 | | | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | |
| **Ամերիաբանկ** | **1** | **15.2%** | **447,085** | **1** | **15.5%** | **456,557** | **-2.1%** |
| Արդշինբանկ | 2 | 14.0% | 411,278 | 2 | 12.0% | 351,749 | 16.9% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 3 | 9.3% | 272,743 | 4 | 9.2% | 269,843 | 1.1% |
| Հայբիզնեսբանկ | 4 | 9.1% | 268,085 | 3 | 9.5% | 278,068 | -3.6% |
| ԱԿԲԱ | 5 | 7.5% | 221,742 | 6 | 7.4% | 218,738 | 1.4% |
| HSBC | 6 | 6.9% | 202,686 | 5 | 7.6% | 222,369 | -8.9% |
| Ինեկոբանկ | 7 | 6.3% | 184,741 | 7 | 6.7% | 195,895 | -5.7% |
| Յունիբանկ | 8 | 5.0% | 146,487 | 9 | 4.6% | 135,668 | 8.0% |
| Կոնվերս Բանկ | 9 | 4.4% | 130,111 | 8 | 4.7% | 138,280 | -5.9% |
| Արարատբանկ | 10 | 3.7% | 107,964 | 10 | 3.7% | 110,156 | -2.0% |
| Հայէկոնոմբանկ | 11 | 3.0% | 88,497 | 11 | 3.3% | 97,759 | -9.5% |
| Արցախբանկ | 12 | 2.9% | 84,249 | 12 | 2.8% | 83,114 | 1.4% |
| Առէքսիմբանկ | 13 | 2.6% | 77,436 | 14 | 2.4% | 71,373 | 8.5% |
| Անելիք Բանկ | 14 | 2.5% | 74,828 | 13 | 2.5% | 74,629 | 0.3% |
| Արմսվիսբանկ | 15 | 2.1% | 60,823 | 15 | 2.3% | 67,158 | -9.4% |
| Զարգացման հայկական բան | 16 | 2.0% | 59,459 | 16 | 2.1% | 61,539 | -3.4% |
| Պրոմեթեյ Բանկ | 17 | 2.0% | 58,947 | 17 | 1.8% | 54,223 | 8.7% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 18 | 1.1% | 30,983 | 18 | 1.2% | 34,330 | -9.7% |
| Մելլաթ բանկ | 19 | 0.4% | 10,323 | 19 | 0.3% | 10,139 | 1.8% |
| ԲՏԱ Բանկ | 20 | 0.2% | 6,736 | 20 | 0.3% | 9,634 | -30.1% |
| Ընդամենը | | | 2,945,205 | | | 2,941,221 | 0.1% |

# Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

մլն ՀՀ դրամ

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | | 2015 | | | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | |
| **Ամերիաբանկ** | **1** | **15.0%** | **288,821** | **1** | **15.6%** | **294,012** | **-1.8%** |
| Արդշինբանկ | 2 | 13.5% | 259,832 | 2 | 10.8% | 204,107 | 27.3% |
| Հայբիզնեսբանկ | 3 | 10.1% | 195,383 | 3 | 9.7% | 183,779 | 6.3% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 4 | 9.5% | 183,332 | 4 | 9.4% | 176,766 | 3.7% |
| HSBC | 5 | 7.7% | 148,319 | 5 | 8.4% | 157,693 | -5.9% |
| ԱԿԲԱ | 6 | 6.5% | 125,229 | 6 | 7.0% | 131,216 | -4.6% |
| Յունիբանկ | 7 | 6.5% | 124,727 | 7 | 5.9% | 111,768 | 11.6% |
| Կոնվերս Բանկ | 8 | 5.6% | 107,958 | 8 | 5.8% | 108,928 | -0.9% |
| Ինեկոբանկ | 9 | 4.2% | 80,487 | 9 | 4.3% | 81,686 | -1.5% |
| Հայէկոնոմբանկ | 10 | 2.9% | 55,624 | 10 | 3.3% | 61,979 | -10.3% |
| Արցախբանկ | 11 | 2.8% | 53,711 | 12 | 2.9% | 54,693 | -1.8% |
| Զարգացման հայկական բան | 12 | 2.8% | 53,294 | 13 | 2.9% | 53,963 | -1.2% |
| Արարատբանկ | 13 | 2.8% | 53,151 | 11 | 3.1% | 57,567 | -7.7% |
| Անելիք Բանկ | 14 | 2.7% | 52,905 | 14 | 2.8% | 53,159 | -0.5% |
| Առէքսիմբանկ | 15 | 2.7% | 51,321 | 15 | 2.5% | 47,226 | 8.7% |
| Պրոմեթեյ Բանկ | 16 | 1.9% | 35,871 | 17 | 1.8% | 33,607 | 6.7% |
| Արմսվիսբանկ | 17 | 1.6% | 30,568 | 16 | 2.2% | 40,810 | -25.1% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 18 | 1.3% | 25,541 | 18 | 1.5% | 28,572 | -10.6% |
| ԲՏԱ Բանկ | 19 | 0.1% | 2,682 | 19 | 0.2% | 3,021 | -11.2% |
| Մելլաթ բանկ | 20 | 0.1% | 1,353 | 20 | 0.1% | 1,417 | -4.6% |
| Ընդամենը | | | 1,930,109 | | | 1,885,969 | 2.3% |

# Կապիտալ

մլն ՀՀ դրամ

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | | 2015 | | | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | |
| **Ամերիաբանկ** | **1** | **10.8%** | **60,639** | **1** | **10.7%** | **59,317** | **2.2%** |
| ԱԿԲԱ | 2 | 10.2% | 57,498 | 2 | 10.1% | 55,977 | 2.7% |
| HSBC | 3 | 9.6% | 53,962 | 3 | 9.6% | 53,036 | 1.7% |
| Արդշինբանկ | 4 | 8.9% | 49,872 | 4 | 9.0% | 50,018 | -0.3% |
| Ինեկոբանկ | 5 | 7.5% | 42,102 | 6 | 7.4% | 40,723 | 3.4% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 6 | 7.5% | 42,027 | 5 | 8.3% | 46,003 | -8.6% |
| Հայբիզնեսբանկ | 7 | 5.2% | 29,314 | 7 | 5.2% | 28,621 | 2.4% |
| Ակբաբանկ | 8 | 4.5% | 25,376 | 8 | 5.1% | 28,326 | -10.4% |
| Պրոմեթեյ Բանկ | 9 | 4.3% | 24,197 | 9 | 4.3% | 23,986 | 0.9% |
| Յունիբանկ | 10 | 4.1% | 23,171 | 10 | 4.1% | 22,844 | 1.4% |
| Կոնվերս Բանկ | 11 | 4.1% | 22,945 | 11 | 4.1% | 22,714 | 1.0% |
| Արարատբանկ | 12 | 4.0% | 22,710 | 12 | 4.1% | 22,483 | 1.0% |
| Արմսվիսբանկ | 13 | 3.7% | 20,945 | 14 | 3.3% | 18,330 | 14.3% |
| Հայէկոնոմբանկ | 14 | 3.5% | 19,684 | 17 | 2.0% | 11,033 | 78.4% |
| Մելլաթ բանկ | 15 | 3.4% | 19,351 | 13 | 3.5% | 19,270 | 0.4% |
| Անելիք Բանկ | 16 | 2.8% | 15,690 | 15 | 3.1% | 17,236 | -9.0% |
| Արցախբանկ | 17 | 2.1% | 11,836 | 16 | 2.1% | 11,557 | 2.4% |
| Զարգացման հայկական բան | 18 | 1.9% | 10,690 | 18 | 1.9% | 10,568 | 1.2% |
| ԲՏԱ Բանկ | 19 | 0.9% | 5,304 | 20 | 1.0% | 5,294 | 0.2% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 20 | 0.9% | 5,273 | 19 | 1.0% | 5,408 | -2.5% |
| Ընդամենը | | | 562,585 | | | 552,745 | 1.8% |

# Զուտ շահույթ

մլն ՀՀ դրամ

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | | 1Q2015 | | | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | ԴԻՐՔԸ | ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ | ԳՈՒՄԱՐԸ | |
| **Ամերիաբանկ** | **1** | **38.6%** | **1,196** | **2** | **65.4%** | **1,471** | **-18.7%** |
| Ինեկոբանկ | 2 | 37.8% | 1,172 | 3 | 44.9% | 1,010 | 16.0% |
| Արդշինբանկ | 3 | 36.3% | 1,126 | 5 | 32.3% | 726 | 55.2% |
| ԱԿԲԱ | 4 | 36.1% | 1,118 | 4 | 34.8% | 784 | 42.6% |
| HSBC | 5 | 24.2% | 750 | 1 | 74.4% | 1,675 | -55.2% |
| Արմսվիսբանկ | 6 | 23.9% | 740 | 10 | 16.1% | 362 | 104.2% |
| Հայբիզնեսբանկ | 7 | 15.7% | 487 | 8 | 19.4% | 436 | 11.8% |
| Արցախբանկ | 8 | 9.2% | 286 | 21 | -188.5% | (4,242) | 106.8% |
| Յունիբանկ | 9 | 6.8% | 212 | 6 | 25.1% | 564 | -62.4% |
| Արարատբանկ | 10 | 5.7% | 177 | 9 | 18.0% | 406 | -56.4% |
| Կոնվերս Բանկ | 11 | 4.8% | 148 | 7 | 22.4% | 504 | -70.6% |
| Զարգացման հայկական բան | 12 | 3.9% | 122 | 17 | -7.7% | (174) | 170.0% |
| Հայէկոնոմբանկ | 13 | 3.4% | 104 | 16 | -2.5% | (57) | 283.1% |
| Պրոմեթեյ Բանկ | 14 | 3.1% | 97 | 11 | 11.5% | 259 | -62.7% |
| Մելլաթ բանկ | 15 | 2.7% | 84 | 12 | 7.0% | 158 | -46.9% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 16 | 0.0% | 1 | 20 | -46.5% | (1,045) | 100.1% |
| Պրոկրեդիտ | 17 | 0.0% | - | 14 | 1.9% | 42 | -100.0% |
| ԲՏԱ Բանկ | 18 | -1.6% | (48) | 15 | -1.1% | (25) | -90.9% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 19 | -5.8% | (178) | 18 | -7.8% | (176) | -1.4% |
| Անելիք Բանկ | 20 | -49.9% | (1,546) | 19 | -25.9% | (584) | -164.9% |
| Առէքսիմբանկ | 21 | -95.2% | (2,950) | 13 | 7.0% | 157 | -1980.8% |
| Ընդամենը | | | 3,098 | | | 2,250 | 37.7% |
| Եկամտաբեր բանկեր | | | 7,821 | | | 2,835 | 175.8% |

# Ակտիվների եկամտաբերություն

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | 2015թ. 1-ին եռ. | |
|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | ԴԻՐՔԸ | ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ |
| Արմսվիսբանկ | 1 | 3.5% | 4 | 1.8% |
| Ինեկոբանկ | 2 | 2.0% | 1 | 2.6% |
| ԱԿԲԱ | 3 | 1.6% | 10 | 1.1% |
| Արցախբանկ | 4 | 1.2% | 21 | -18.6% |
| Մելլաթ Բանկ | 5 | 1.1% | 2 | 2.3% |
| HSBC | 6 | 1.1% | 3 | 2.3% |
| Արդշինբանկ | 7 | 1.0% | 11 | 0.8% |
| **Ամերիաբանկ** | **8** | **0.9%** | **5** | **1.5%** |
| Զարգացման հայկական բանկ | 9 | 0.7% | 17 | -1.0% |
| Հայբիզնեսբանկ | 10 | 0.6% | 12 | 0.6% |
| Արարատբանկ | 11 | 0.5% | 9 | 1.2% |
| Յունիբանկ | 12 | 0.5% | 8 | 1.3% |
| Պրոմեթեյ Բանկ | 13 | 0.5% | 7 | 1.3% |
| Հայէկոնոմբանկ | 14 | 0.4% | 15 | -0.3% |
| Կոնվերս Բանկ | 15 | 0.4% | 6 | 1.3% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 16 | 0.0% | 18 | -1.2% |
| Պրոկրեդիտ Բանկ | 17 | 0.0% | 14 | 0.3% |
| ԲՏԱ Բանկ | 18 | -1.4% | 16 | -0.7% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 19 | -1.9% | 19 | -1.4% |
| Անելիք Բանկ | 20 | -6.8% | 20 | -2.7% |
| Առէքսիմբանկ | 21 | -11.7% | 13 | 0.6% |
| Ընդամենը | | 0.4% | | 0.3% |
| Եկամտաբեր բանկեր | | 1.0% | | 0.4% |

# Կապիտալի եկամտաբերություն

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | 2015թ. 1-ին եռ. | |
|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ԿԱՊԻՏԱԼԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | ԴԻՐՔԸ | ԿԱՊԻՏԱԼԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ |
| Արմսվիսբանկ | 1 | 15.1% | 6 | 8.2% |
| Ինեկոբանկ | 2 | 11.3% | 1 | 15.1% |
| Արցախբանկ | 3 | 9.8% | 21 | -149.5% |
| Արդշինբանկ | 4 | 9.0% | 10 | 6.1% |
| **Ամերիաբանկ** | **5** | **8.0%** | **3** | **13.7%** |
| ԱԿԲԱ | 6 | 7.9% | 8 | 6.3% |
| Հայբիզնեսբանկ | 7 | 6.7% | 9 | 6.3% |
| HSBC | 8 | 5.6% | 2 | 14.1% |
| Զարգացման հայկական բանկ | 9 | 4.6% | 17 | -7.1% |
| Յունիբանկ | 10 | 3.7% | 4 | 10.7% |
| Արարատբանկ | 11 | 3.1% | 7 | 7.4% |
| Հայէկոնոմբանկ | 12 | 2.7% | 16 | -2.1% |
| Կոնվերս Բանկ | 13 | 2.6% | 5 | 8.8% |
| Մելլաթ Բանկ | 14 | 1.7% | 11 | 5.6% |
| Պրոմեթեյ Բանկ | 15 | 1.6% | 12 | 4.4% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 16 | 0.0% | 19 | -11.2% |
| Պրոկրեդիտ Բանկ | 17 | 0.0% | 14 | 1.8% |
| ԲՏԱ Բանկ | 18 | -3.7% | 15 | -1.8% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 19 | -13.3% | 18 | -8.9% |
| Անելիք Բանկ | 20 | -37.6% | 20 | -16.5% |
| Առէքսիմբանկ | 21 | -43.9% | 13 | 3.0% |
| Ընդամենը | | 2.2% | | 1.8% |
| Եկամտաբեր բանկեր | | 6.2% | | 2.6% |

# Ծախսերի հարաբերությունը եկամտին

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | 2015թ. 1-ին եռ. | |
|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ԾԱԽՍԵՐ/ԵԿԱՄՈՒՏ | ԴԻՐՔԸ | ԾԱԽՍԵՐ/ԵԿԱՄՈՒՏ |
| Արմսվիսբանկ | 1 | 17.9% | 1 | 30.7% |
| Մելլաթ Բանկ | 2 | 31.0% | 2 | 34.0% |
| Ինեկոբանկ | 3 | 37.9% | 3 | 37.3% |
| Յունիբանկ | 4 | 40.0% | 6 | 48.7% |
| Հայբիզնեսբանկ | 5 | 40.5% | 7 | 49.6% |
| HSBC | 6 | 41.7% | 5 | 41.8% |
| Պրոմեթեյ Բանկ | 7 | 44.2% | 8 | 50.0% |
| **Ամերիաբանկ** | **8** | **44.8%** | **4** | **39.7%** |
| Արդշինբանկ | 9 | 47.3% | 10 | 58.6% |
| ԱԿԲԱ | 10 | 52.1% | 9 | 50.6% |
| Զարգացման հայկական բանկ | 11 | 56.6% | 15 | 71.0% |
| Արցախբանկ | 12 | 57.2% | 18 | 82.1% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 13 | 59.3% | 13 | 63.4% |
| ԲՏԱ Բանկ | 14 | 63.4% | 11 | 60.4% |
| Արարատբանկ | 15 | 64.5% | 12 | 61.7% |
| Կոնվերս Բանկ | 16 | 73.2% | 17 | 75.1% |
| Հայէկոնոմբանկ | 17 | 80.7% | 20 | 102.5% |
| Անելիք Բանկ | 18 | 80.9% | 19 | 97.8% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 19 | 167.6% | 21 | 253.8% |
| Առէքսիմբանկ | 20 | 188.4% | 16 | 73.7% |
| Պրոկրեդիտ Բանկ | 21 | 0.0% | 14 | 68.8% |
| Ընդամենը | | 52.0% | | 55.8% |

# Կապիտալի համարժեքության գործակից

| ԲԱՆԿ | 2016թ. 1-ին եռ. | | 2015թ. 1-ին եռ. | |
|---|---|---|---|---|
| | ԴԻՐՔԸ | ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ | ԴԻՐՔԸ | ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ |
| Մելլաթ Բանկ | 1 | 156.1% | 1 | 82.4% |
| ԲՏԱ Բանկ | 2 | 54.9% | 2 | 42.6% |
| Պրոմեթեյ Բանկ | 3 | 32.7% | 3 | 33.4% |
| Բիբլոս Բանկ Հայաստան | 4 | 23.7% | 7 | 18.1% |
| Արցախբանկ | 5 | 22.1% | 4 | 32.0% |
| Առէքսիմբանկ | 6 | 20.3% | 8 | 15.6% |
| Արարատբանկ | 7 | 20.2% | 6 | 18.7% |
| Արմսվիսբանկ | 8 | 20.0% | 5 | 20.6% |
| Ինեկոբանկ | 9 | 19.1% | 10 | 14.8% |
| **Ամերիաբանկ** | **10** | **18.7%** | **13** | **13.6%** |
| Հայէկոնոմբանկ | 11 | 18.2% | 18 | 13.1% |
| ԱԿԲԱ | 12 | 16.7% | 14 | 13.3% |
| HSBC | 13 | 16.5% | 9 | 14.9% |
| Զարգացման հայկական բանկ | 14 | 14.9% | 15 | 13.2% |
| Կոնվերս Բանկ | 15 | 14.2% | 11 | 14.5% |
| Անելիք Բանկ | 16 | 13.6% | 20 | 12.4% |
| Արդշինբանկ | 17 | 13.1% | 17 | 13.2% |
| ՎՏԲ Բանկ Հայաստան | 18 | 13.0% | 16 | 13.2% |
| Յունիբանկ | 19 | 12.2% | 12 | 13.9% |
| Հայբիզնեսբանկ | 20 | 12.2% | 19 | 12.4% |
| Պրոկրեդիտ Բանկ | 21 | 0.0% | 21 | 0.0% |
| Ընդամենը | | 17.1% | | 15.5% |



**Լուսինե Վարդանյան**
«Ամերիա» ընկերությունների խմբի
Ներդրողների հետ
փոխհարաբերությունների բաժնի ղեկավար

l.vardanyan@ameribank.am
ir@ameriabank.am

ՀՀ, Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի փողոց, 9

Հեռ.՝ + 374 10 561111
Ֆաքս՝ + 374 10 513133
Էլ. փոստ՝ info@ameriabank.am

Available on the iPhone
App Store

2011, 2012, 2014
2012, 2013, 2014, 2015
2010, 2013, 2015